

ՄԻ ՔԱՆԻ ՆԿԱՏԱՌՈՒՄ –ԱՎԵՏ ԱՃԱՆՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ի շարս այլ ածանցների –**ավետ** (<աւետ) վերջածանցը մեկ–երկու առումներով առանձնահատուկ ուշադրություն է գրավում:

Դա նկատելի է ածանցների համակարգված առաջին իսկ ուսումնասիրության՝ Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսության» մեջ: Աբեղյանը նախ՝ **ավետ** ածանցի լուսաբանումը տեղափոխում է նրա –**վետ** տարբերակի վրա, հավանաբար այն ներքին համոզումով, որ ա–ն հետագայի հավելում է՝ իբրև հոդակապ: Ի դեպ, նույն կերպ է վարվել նաև –**ավուն** (տես –**վուն**, § 233) և –**արան** (տես –**րան**, § 234) ածանցների պարագայում: Եվ սա այն դեպքում, երբ հայերենը այս երեք ածանցներով կազմված այնպիսի բառ չի տալիս, որ հանդես գա առանց ա–ի, որը սովորական է, ասենք, *ավոր–վոր*, *անոց–նոց* և ուրիշ փոփոխակների դեպքում (հմտ. *չբավոր–կթվոր*, *խոհանոց–գոգնոց* և այլն):

Անկասկած, զուտ –**վետ**, –**վուն**, –**րան** ածանցներ ունեցող բառերի չգոյության հանգամանքն է հուշել հետագայի ուսումնասիրողների մեծ մասին՝ հրաժարվելու վերջին այդ տարբերակների հիշատակումից և ընդունելու լոկ ա–ով սկզբնավորող ձևերը²:

Սակայն Աբեղյանին է հետևել հայերենի ածանցների ամբողջական քննությանը նվիրված առաջին մենագրության հեղինակը՝ Ս. Էլոյանը, որն, ի դեպ, առհասարակ չի էլ հիշատակում –**ավետ** // –**վետ** ածանցի –**ավետ** տարբերակը³: Նույնը, բնականաբար, տեսնում ենք հայոց լեզվի ակադեմիական եռահատոր ուսումնասիրության 1–ին հատորի մեջ, որի «Ածանցում» բաժինը պատկանում է նույն հեղինակին⁴:

Շատ ավելի ուշագրավ է այն, որ Ս. Աբեղյանը բոլորովին զանց է առել –**ավետ** // – **վետ** ածանցի ծագումնաբանության հարցը. անշուշտ, նա համոզիչ փաստարկում չի ունեցել դրա՝ որևէ հիմքի հետ կապելու վերաբերյալ:

Ս. Էլոյանը, որ հիշյալ մենագրության մեջ հատուկ բաժին է հատկացրել հայերենի ածանցների առաջացման ուղիներին, ամենայն հավանականությամբ հետևելով Աբեղյանին, նույնպես «շրջահայեցողեն» անտեսել է –**վետ**–ի ծագումնաբանության հարցը:

Նրանից առաջ Ա. Մուրվալյանը, անդրադառնալով այլևայլ ածանցների ծագման աղբյուրներին, նույնպես բաց է թողել –(ա)վետ ածանցը⁵:

Այս ածանցի ծագումնաբանության խնդիրը մեզանում թերևս առաջինը արծարծել է ամբողջությամբ ածանցներին նվիրված երկրորդ մենագրության հեղինակը՝ Ս. Գալստյանը: Նա այն համոզումն է արտահայտում, թե «երջանկավետ, խաղաղավետ, երանավետ և նման այլ, առավել ևս առաջին բաղադրիչ բայարմատով կազմված **ցնծավետ**, **բերկրավետ** և այլ բաղադրությունները իսկական բարդություններ են (երջանկություն ավետող, խաղաղություն ավետող, երանություն ավետող...): Սակայն նմանակությամբ դրանք և դրանց նմանները հաճախ ընկալվում են և գործածվում որպես ածանցավոր բարդություններ՝ «երջանկաշատ, երջանկալից, ցնծալից, բերկրալից» և այլ նշանակություններով⁶:

Սա ինքնին հետաքրքիր է, թեևս, բայց անընդունելի: Քանի որ լեզվաբանի նշած՝ «երջանկություն ավետող, խաղաղություն ավետող» և այլ նշանակություններով զբանցում չենք զտնում ոչ արդի հայերենի, ոչ էլ զրաբարյան հայտնի բառարաններում: Նման նշանակությունների համար զրականությունը վկայություն չի տալիս:

Ավելի ուշ Ա. Մարգարյանը արդեն վստահաբար գրում է, թե այն «ծագում է, անշուշտ, գրք. աւետել («ուրախ լուր տալ») բայի աւետ // աւետ արմատից: Նախապես իբրև իսկական բարդության բաղադրիչ է զործածվել, բայց հետագայում, ինչպես՝ բարեւետ < բարի+աւետ, երանաւետ < երանի+աւետ օրինակներն են ցույց տալիս, բուն՝ արմատական իմաստից հեռանալով՝ ածանց է դարձել»⁷:

Դարձյալ պիտի առարկենք և ասենք, որ զրաբարը աւետ—ով բաղադրված ու նման նշանակություններ վերագրված բառերի վկայություններ չի տալիս: Հայկազյան բառարաններից և ոչ մեկում երանաւետ—ը չունի «երանի ավետող» նշանակությունը, այլ միմիայն «երանմուր յաւետ, երանելի յոյժ», «երանալից, ամեն կերպով երանելի» բացատրությունները⁸: Նույնպես և բարեւետ—ը: Սա ոչ թե «բարի» կամ «բարև» ավետել նշանակությունն է ունեցել, ինչպես հավված է կարծելու Ա. Մարգարյանը, այլ միմիայն՝ «բարեբեր» (այսինքն՝ «բարիքներով առատ, լի») կամ «բարեօք լի»⁹ (այսինքն՝ «լավ, բարիով լի»):

Ինքը՝ Աճառյանը, այնպիսի բարդություն չի հիշատակում, որտեղ աւետ արմատը հանդես գա իբրև հետնաբաղադրիչ (առավել ևս՝ ածանցի փոխակերպվող նշանակությամբ), այլ միայն որպես առաջին բաղադրիչ է եղել՝ «աւետագիր, աւետապարգև» և այլն¹⁰:

Ավետ բառի ծագումնաբանությունը (հ.—ե. *aud «խոսել» արմատից) պարզած է. Աղայանը նույնպես որևէ ակնարկ չի անում այդ բառարմատի՝ հետագայում —ավետ վերջածանցի փոխակերպվելու վերաբերյալ¹¹:

Այլևայլ բառերի ստուգաբանությունների հետամուտ Պ. Բեդիրյանը մի այլ արմատի՝ հավետ—ի հետ է կապում նմանահունչ ածանցը: «Ըստ Հր. Աճառյանի Արմատական բառարանի,— գրում է նա,— ավետ ածանցը կարելի է կապել եբրայերենից փոխառյալ հավետ / ավետ (յաւետ — աւետ) արմատի հետ, որ նշանակում է «ավելի, շատ»¹²: Այստեղ մի քանի անճշտություն կա: Աճառյանը նախ՝ յաւետ—ը ոչ թե եբրայերենից, այլ պաղևավերենից է փոխառյալ տեսնում: Ապա՝ բանն այնպես է ներկայացվում, թե իբր ինքը՝ Աճառյանն է ավետ ածանցը կապում հավետ բառին. այնինչ նա ածանցի անուն չի էլ տալիս, իսկ նրա բերած երկարայաւետ «շատ երկար» և կամայաւետ «հոծարակամ, մշտապես սիրով» բարդություններում վերջադիր յաւետ—ը աւետ ածանցի չի փոխակերպվել¹³: Իսկ ավելի եականն այն է, որ յաւետ—ի «ավելի, շատ» նշանակությունները սոսկ ժամանակի մեծությանն են առնչվում, բայց ոչ՝ «մի բանից շատ ունենալու, մի բանով առատ» իմաստներին:

Վերջապես, ածանցների ծագումնաբանական հարցերին անդրադարձած Գ. Տահուկյանը նախ իր հիմնարար աշխատություններից մեկում, առանց որևէ մեկնաբանության կամ աղբյուրագիտական հիմունքի նշման, աւետ ածանցը կապում է իրանական փոխառության հետ¹⁴: Հետագայում՝ «Հին հայերենի վերջածանցների ծագումը» հետազոտության մեջ նա, ըստ էության, մեծ կասկածանքով է վերաբերվում այդ տեսակետին՝ գրելով. «... ենթադրվում է իրանա-

կան ծագում (ըստ Բելլիի... և ըստ Ղափանցյանի...), բայց բերված զուգահեռները համոզիչ չեն. անհավանական է կապը *աւետ* (*աւետ*, հմմտ. *աւետ-ել*) արմատի հետ»¹⁹: Ու թեև հոդվածի վերջում *աւետ*-ը, այդուհանդերձ, դնում է իրանական ծագման ածանցների շարքում, բայց ոչ առանց հարցական նշանի²⁰:

Այսպիսով՝ *ավետ(վետ)* վերջածանցի ծագումնաբանության հարցը մնում է չլուծված՝ հակադաս առաջադրված գանազան վարկածների:

2. Այս ածանցի «բախտը չի բերել» նաև ուղղագրության ասպարեզում:

Մինչև 1922 թ. ուղղագրական փոփոխությունը որևէ խնդիր չի առաջացել այն բառերի պարագայում, երբ *աւետ*-ին նախորդել է ի վերջնահնչյուն ունեցող բառարմատ. **գինի+աւետ > գինեւետ**²¹: Ղրանից հետո մինչև 1940թ., երբ առանձնացած և գրանիշը հանվում է այբուբենից, էվ(յեվ) հնչյունակապակցությունը գրվում է թե է-ով, թե եվ-ով (երբեմն էլ՝ յեվ)²²: 1931-ին լույս տեսած Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսության» մեջ «կարեվոր, հոգեվորական» գրությունների օրինակով հանդիպում ենք նաև «այգեվետ»-ին (էջ 288):

Այս ընթացքում լույս տեսած միակ ուղղագրական բառարանի հեղինակը՝ Նշան Ալլահվերդյանը, միանգամայն ստույգ է կոսահել եվ հնչյունակապակցության գրության ապագան՝ գրանցելով հետևյալ ձևերը. *արեւեք, ալեոր, կարեւեր...* Մեզ հետաքրքրող բառերից կա միայն մեկը՝ **գինեւետ** (էջ 87) գրությամբ: Սա նշանակում է, որ բառարանագիրը հստակորեն գիտակցել է *ավետ*-ի՝ ածանց լինելու իրողությունը, ուստի և գրության միակ ճիշտ ձևը օրինաչափորեն համարել է կցագիր և-ը (**գինի+ավետ > գինե + վետ > գինեւետ**):

Թվում էր, թե միանգամայն օրինական այդ գրեւածնը հիմք էր դառնալու հետագա բառարանների համար, որոնք արդեն լույս էին տեսնելու 1940 թ. ուղղագրական մասնակի բարեփոխումից հետո:

Սակայն ուղղագրական առաջին խախտումը, թերևս, սկսվում է 1944-ին լույս տեսած Մ. Ղարիբյանի «Հայերենի ուղղագրական նոր բառարանից», որում տեղ է գտել **գինեվետ**-ը²³: Այս, ըստ էության, սխալագրությունը այնուհետև տեղ է գտնում հետագայում լույս տեսած բոլոր բառարաններում, դասագրքերում և, ընդհանրապես, լեզվաբանական բնույթի գրքերում²⁴: Հասկանալի է, որ **գինեվետ**-ի գրության օրինակով պիտի գրանցվեին նաև *այգեվետ, ալեվետ, բարեվետ* բառերը²⁵:

Գրության ընդգծված ձևերը միայն վկայում են այն մասին, որ *վետ*-ը այլևս ամրագրվել է իբրև բառարմատ: Ղրա պարզ հավաստումը գտնում ենք այսօրինակ ձևակերպման մեջ. «Եվ կամ յեվ հնչյունակապակցությունները գրվում են եվ տառակապակցությամբ..., եթե բառաբաղադրության մեջ տարբեր արմատաբաղադրիչների (բառաբաղադրիչների) են վերաբերում. օրինակ՝ տարեվերջ, հոգեվարք, այգեվետ»²⁶:

Կնշանակի՝ մի քանի տասնամյակ շարունակ իշխում է *վետ*-ի՝ իբրև առանձին արմատաբառի պատկերացումը: Եվ միայն վերջերս այդ թյուրըմբռնման դեմ (թեև անճիշտ հասցեագրումով) վրդովված հանդես եկավ Պ. Բեդիրյանը՝ արդարացիորեն մատնանշելով, թե «այս –*ավետ* (գրք –*աւետ*) ածանցը ոչ մի կապ չունի *վետ* (գրք. *վետ*) արմատի հետ, որ «ալիք» է նշանակում (այստեղից՝ **վետվետուն**՝ ալիքածև, ալիքավոր)²⁷:

Միանգամայն ստույգ դիտողություն է սա, բայց ինչպես ասում են, սխալն ար-

դեն կատարված է. ամենուրեք, իբրև ճիշտ գրելածներ, ամրագրված են՝ **գինեվետ, այգեվետ, մաս ալեվետ ու բարեվետ**: Ինչ խոսք, կարելի է համակերպել տասնամյակների ավանդույթի ուժով օրինականացված սխալագրություններին: Բայց և, ցանկության դեպքում էլ, կարելի է վերականգնել այդ բառերի՝ ստուգաբանորեն հիմնավորված ճիշտ գրելածները՝ **գինևետ, այգևետ...**²⁴:

Թվում է՝ կա մաս երրորդ ուղին, որի մասին առիթ են ունեցել արտահայտվելու²⁵: Մեր տպագիր մամուլի շատ էջերում վերականգնվել է հանրիավի արտաքսված և գրանիշը, որ արդեն հայտնվում է ոչ միայն **եւ** շաղկապի պարագայում, այլև բառերի այն բաղադրամասերում, որտեղ վ–ն առանձին արմատի սկզբնատառը չէ. **կարեւոր, հոգեւոր, ագեւոր...** Ուստի և կլինի՝ **գինևետ** — Բայց մաս կունենանք՝ **կարեվեր, հոգեվարք, ագեվագ, գինեվաճառ...**

Կվերադառնանք դրանց ավանդական ու միակ ճիշտ գրելածներին՝

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Տես Ս. Աբեղյան, Երկեր, 2, Ե., 1974, էջ 203, 227–228:
- ² Տես Ս. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Ե., 1955, էջ 316–317, Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Ե., 1955, էջ 174–182; Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1978, էջ 102; Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1990, էջ 250 և այլն: Արանցում նախապատվությունը տալով —**ավետ տարբերակին**՝ արդեն անտեսվում է —**վետ**—ը՝
- ³ Տես Ս. Էլոյան, Ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1963, էջ 146, 195:
- ⁴ Տես Վ. Սահբեկյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, ՀԱՍՏ ԳԱ հրատ., Ե., 1979, էջ 377–481:
- ⁵ Տես Ա. Մուրվալյան, նշվ. աշխ., էջ 295–304:
- ⁶ Տես Ս. Գալստյան, նշվ. աշխ., էջ 102:
- ⁷ Ա. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 250:
- ⁸ Գ. Աւետիքեան, Խ. Սիրմելեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Ե., 1979, էջ 668, Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865, էջ 266:
- ⁹ Առձեռն բառարան հայկազեան լեզուի, էջ 177:
- ¹⁰ Դր. Սճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Ե., 1971, էջ 358:
- ¹¹ Տես Է. Սդայան, Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974, էջ 35:
«Կրթություն» (շաբաթաթերթ), հ. 12, 2004թ.: Նույնը, ավելի հաստատական տոնով, Պ. Բեդիրյանը պնդում է մի այլ տեղ. «Սճառյանը այս ածանցը կապում է երբայերենից փոխառյալ հավետ (գրք. յաւետ) արմատի հետ, որ «ճոխ» էր նշանակում» (Պ. Բեդիրյան, Դ. Գյուրջինյան, Հայոց լեզվից 50 նորացված հարցարաններ, Ե., 2004թ., էջ 96):
- ¹² Տես Դ. Սճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 392:
- ¹³ Տես Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 355:
- ¹⁴ Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պրակ 2, Ե., 1998, էջ 18:
Նույն տեղում, էջ 40:
- ¹⁵ Առձեռն բառարան հայկազեան լեզուի, էջ 215: Գրության և–ով ձևը (ի տարբերություն. ասենք, *գինեվաճառ*–ի) մեկ անգամ ևս փաստում է, որ **ավետ**–ը հնում ևս միայն ածանց է գիտակցվել:
- ¹⁶ Տես, օրինակ, Ա. Դարիբյան, Հայոց լեզվի քերականության դասագիրք (5–6 դաս),

- Ե., 1939թ. Սրա տարբեր էջերում կգտնենք՝ պարզեմ, անծրն, յետեմ, օթեման (66), երևաց, պարզեմատրեմ, յեմ (77):
- Նույն հեղինակի նախորդ՝ 1940-ին լույս տեսած «Ուղղագրական համառոտ բառարանում» այն առհասարակ զրանցված էր:
- Տես, օրինակ, Ա. Ղարիբյան, Ե. Տեր-Մինասյան, Ս. Պետրոսյան, Հայ-Ռուսերեն բառարան, Ե., 1947, Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Ե., 1955; Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Ե., 1955; Ա. Ղարիբյան, Գ. Շեկյան, Դպրոցական ուղղագրական բառարան, Ե., 1965; Ա. Սուբխասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Ե., 1967; Հ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Ե., 1976 և այլն:
- Ծերեն մի «բացատրություն» հիշատակենք՝ Հ. Բարսեղյանի հիշյալ բառարանում (էջ 175) «բարևել» բառի հարևանությամբ գետեղված «բարևետ»-ը, սա, բանի որ չունի անհրաժեշտ՝ «բարիքներով լի, առատ» բացատրություն-նշումը, անշուշտ թյուրիմացորեն կապվում է «բարևի» բառիմաստին:
- Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան (խմբագիրներ՝ Աթայան Է., Աղայան Է., Պալատյան Ս., Գարեգինյան Գ., Իշխանյան Ռ., Պողոսյան Պ., Սուքիասյան Ա.) Ե., 1987, էջ 623:
- «Կրթություն» (շաբաթաթերթ), նշված համարը:
- Բնական է, որ Պ. Բեդիրյանը այդ զրությամբ էլ դրանք գետեղել է վերը նշած (տես ծանոթ. 12) զրբուկում:
- Տես «Գրական թերթ», 11.02.2005թ.:

Г. Галстян

О СУФФИКСЕ «ԱՎԵՏ»

Среди других аффиксов суффикс «ավետ» представляет особый интерес.

М. Абегиан, который более или менее полностью изучил суффиксы, обошел вопрос происхождения «ավետ» — а. Между тем, некоторые лингвисты генезис этого суффикса связывали со словами «ավետ» («радостная весть») или «հավետ» («вечно»). В статье указывается, что нет достоверных оснований для таких выводов.

Академик Г. Джаукян с оговорками, ставит этот суффикс в ряд иранских заимствований.

Таким образом, вопрос происхождения суффикса «ավետ» остается неразрешенным.

Н. Galstyan

A FEW HINTS ON THE SUFFIX «ԱՎԵՏ»

Among other affixes, the suffix «ավետ» is of particular interest.

М. Abeghyan, who is the first author of a more or less complete study of Armenian affixes, ignored the question of the origin of affix «ավետ». Nevertheless, some linguists relate the genesis of the above mentioned affix either to the words «ավետ», (good news), or «հավետ», (forever).

The research focuses on the assumption that the mentioned viewpoints are not grounded. Academician Jahukyan attempts to rank the affix «ավետ» among the Iranian borrowings. Thus, the genesis of the above mentioned affix is still open.